ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-8-2-Ա

ք. Երևան 13.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում քննարկեց 2025 թվականի փետրվարի 19-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «HYUNDAI MOTOR COMPANY» ընկերության (12, Heolleung-ro, Seocho-gu Seoul 06797, KR) «HYUNDAI» (IR1704196) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «HYUNDAI» (HD HYUNDAI CO., LTD. 477 Bundangsuseo-ro, Bundang-gu, Seongnam-si, Gyeonggi-do, Republic of Korea KR N 11580, 30.03.2007թ.) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես համաձայն էր:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «HYUNDAI MOTOR COMPANY» ընկերության «HYUNDAI» (IR1704196) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ